25. ՍՈՅԼԻ ԱՂՋԻԿ

Կէղնի, չէղնի էրկու ախպեր։ Էրկուա լէ թագավոր կէղնին, մեկ՝ Արևելից, մեկ լէ՝ Արևմտից։ Արևելաց թագավորը կվախճանի, հրմլա պզտիկ էրեխե մե կմնա։ Ընդրա արոն ու կզարոն դովլաթ մալ կկուրիսի, կէրթա։ Տղեն կընգի խըլղի դուռ ու փոզան, խաց կժողվա ուրին, կուտա, փարա կէնա կուտա, մարդ չկա պախա, քրչ քրչին կկախվի, կէղի խեղճ, կէրթա չոլ տեղ մե։

Տղեքներ, ճժեր կխաղան խըդ իրար, տղեքներ կէղին ընդրա ասքար, էդի կէղի էդրանց ճոչ, գլխավոր. Հ՝որի՞ օր թագավորի ցեղ ա, աստված կճոչցու զէգի։

Ըդրա խորոխպեր կեսա. «Էրթամ տեսնիմ իմ ախպոր տղեն ի՞մալ էղավ»։ Գելի կէրթա կտեսնի, գիգա գեղի գլոխ, կաչքա օր քենի մը ճիժ, բետ բետ տղա էլած ին պզտիկ էրեխի մի աշակերտ, ասքար։

Թագավոր ինք կաչքա ըխո ու անգանջ կէնա տղին, կեսա. «Ես կաչքիմ օր իդա կեղտոտ, քրչոտ տղին, իդա բետ, բետ տղեքներ էղած են ասքար», կաչքա էդի թագավորի ցեղ ա, օր կճոչնա. «Իդա իմ ախպոր տղեն ա»։

Գիգա դեղ, կխարցու, կեսա.— Գյալո՛, իմ ախպոր տղեն իմա՞լ էղած է։

Կեսին.— Ախպեր վախճաներ ա, էրեխեն լէ գացի ճժերու խետ կխաղա։

Գելի մողաթ կկենա, կաչկա օր էն տղեն օր ճոչութեն կէնե, ուր ախպոր տղեն էր։ Կբերա հրմամլամիշ կէնա, ծեռք մե աղեկ շոր կխաքցու, փել մի կպախա, թփռոշկցու (կմեծացնե)։

Տղեն օր կմեծնա, թագավոր կեսա.— Պտի կարքիմ, խեղճ ա։

Սալախ կէնա էրկրե էրկիր, կրսին ֆիլան գեղ իրեք ախպեր ին, ամեկու մեկուճար ախչիկ կա։

Թագավոր կէրթա ճոչ ախպոր տուն հ'ուղընկան։

Կեսա.— Խնամատորք, խնամատորք։

Գելին քուռսի կդրին, թագավոր կնստի։ Ախչկա խեր կեսա.

— Ի՞նչ խնամութեն։

Թագավոր կեսա.— Մեր ախչիկ տվեք իմ ախպոր տղին։

Կեսա.— Ախչիկ մի կուրբան կէնիմ քու օտներու տկին։

Կեսա.— Գյալո՛, աստված կսիրիս քու ախչկա էութեն ըսիս։

Կեսա.— Օր դու ըսիր՝ «Աստված կսիրիս», ես լէ պտի ըսիմ,— կեսա,— իմ ախչիկ հ'ելավ օր թը առավ փառչ գնաց ճրու, լցեց էկավ տուն, տեսավ օր թը շառբը ուր օտներու հ'առեճ հ'ելավ, կզարկա էդ էրկու ման լէ կճարթա, քասեն քասի վրեն կճարթա, կդել կգլի վրեն կճարթա, ավիրող ախչիկ ա, մեկ ծի, կապեկ փարա մոտ մեկ ա, շախող չէ։

Գելնի կեսա.— Ես չուզիմ, էդ իմ խարս չէ։

Գելնի կէրթա միչնեկ ախպոր տուն, էնտեխ լէ կեսա.— Խնամատորք, խնամատորք։

Քուռսին կդրին, կնստի։

Կեսա,— Ի՞նչ խնամատորք ա։

Կեսա.— Քու ախչիկ պտի տաս իմ ախպոր տղին։

Կեսա.— Իմ ախչիկ կուրբան էղնի քու օտաց տկին։

Կեսա.— Աստված սիրիս, քու ախչկա էութեն ըսիս ընձի։

Կեսա.— Իմ ախչիկ ըսիմ օր թը սաբախտան մեջթիմի փարա ըկնա ուր ծեռ, տաս փարի պես չում կեսավուր կուտա, կխլսու։ Մեկ ծակ ուր շորի վրեն էղի, էլ չփինա, կծեվա, կթափա։ Իմ ախչկա խասյաթ լէ էդ ա։

Էն լէ կեսա.— Չպիտի, էդի իմ խարս չէ։

Գելնի կէրթա մեկել ախպոր տուն հ'ուղընկան։

Կեսա.— Խնամատորք, խնամատորք։

Քուռսին կդրին, կնստի։

Կեսա.— Ի՞նչ ա խնամատորք։

Կեսա.— Քու ախչիկ պտի տաս իմ ախպոր տղին։

Կեսա.— Մեկ ախչիկ թող քու օտներուն կուրբան էղնի։

Կեսա.— Դու քու աստված օր կսիրիս, քու ախչկա էութեն ըսիս։

Կեսա.— Իմ ախչիկ իմա՞լ ախչիկ ա, ըսիմ, սարախտան օր տաս փարե մը կկպի ծեռ, հար իրկուն օր էդ տաս փարեն չէնի մաշթիա, չի գինա օր ու արև իմալ ա։

Թագավոր կեսա.— Էդի իմ խարսն ա, կուգիմ։

Գելնի էրկու ծեռ դոլ քուսան կզարկա։ Կտանի զախչիկ ուր ախպոր ազու խետ կփսակա։ Կառի, կէրթա տուն։ Քենիմ օր կմընա, խելք կսովրցու ընդրան։ Կաչպցի, կեսա.— Խեղճ ա, թող աչպրցին ուրանց, խեղճ ին։ Կդառնա իրիկուն մե էդ էրկսին խրատ կիտա։

Եռսուն քառսուն ծի կառնի տղին, տղեն կէղի բաղրգան։

Կեսա.— Տղա՛, ամանաթ քըզի, օր չէղնի, չէղնի դու կէրթաք կօլորդիք, բաղրգան մի քըզի ռաստ գիգա, դու չթալիս, թ'էնիկ թալա քու մասրաֆ կընդի էդրա վրեն, թը օր դու թալիս՝ ընդրա մասրաֆ կընգի քու վրեն։

Տղեն գելի կէրթա բաղրգանութեն կէնա։ Թագավոր լէ խաթր կառնի ուր ախպոր տղից ու խարսից ու կէրթա։ Խարսն ա, գելի խորոտիկ մի ուր իրիկ կճամխա բաղրդանութեն։

Ինք ու ուրիշ բաղրգան բաշի մի ռաստ գիգան իրարու։ Էդ տղեն զուր բաղրգան կզվռցու ըդ տեխրանք, կթալա, էն ուր բաղրգան կթալա։ Իդախս տղեն լէ գիգա ուր բաղրգան կթալա ըդրա խեչ, իդախս տղի մասրաֆ կընգի էն բաղրգան բաշու վրեն։

Բաղրգան բաշին ըդ տղեն շարթ կրոնին խրտ իրար։

Տղեն կեսա.— Իմ կնիկ հիչ չխափվի, աղեկ կնիկ ա։

Բաղրգան բաշին կեսա.— Դու իմ մշկներ մացեք օդի, սանդրիչ խաղցեք, հարի ես դամ,— կեսա,— ես կէրթամ քու կնիկ ջրոբիմ՝ սանք կայիմ ա, օր թը թուլ էղավ, քու բաղրգան ու քու ծիանք ու տուն խասնի ընձիկ։

Կեսա.— Թըխ էղնի։

Բաղրգան բաշին գելի կէրթա տղի գեղ։ Ջադուքար պառվի մե ռաստ գիգա, կեսա։

— Ճոչէ, քզի քու կիշռունքով փարա կիտամ, դու գիս տանիս թագավորու խաբսի մոտ։

Կեսա.— Ռհաթ ա քու տանիլ։

Գելի չաքմաշե մի կիտա սուքել, ու կէրթա էդ խարսի մոտ, կեսա.

— Լաո՛, ես էսօր կէրթամ հաջ, իմ ընկերտիք գացած ին, ես մացեր իմ։

Խարս լէ կեսա.— Մացի օդա, քնի օդա, լուսուն էլի գնա։

Կեսա.— Լաո՛, ընձի չաքմաջե մի կա, բերիմ դնիմ օդա, խըլխ չտանի, չուր ես հ՚իդամ հաջից։

Կեսա.— Բե՛ր դիր։

Ջադուքար պառավ զբազրգան բաշին կէցկա մեջ չաքմաջին, տղի էրկու աչքի տեխ ծակ կթորկա։ Բերա կդնա ըտ խարսի տուն։

Պառավ կեսա.— Խարս, լաո, քու գլոխ դո՞ր կլվաս։

Կեսա.— Իդա ճալաֆ (ջրհոր)։

Կեսա.— Խարս, իմ չաքմաջեն կդնիմ իդա ճալաֆ օր չտանին։

Էն լէ կեսա.— Թ՚ըխ էղնի, քու քեֆն է, դիր։

Էն լէ կեսա.— Խա՛րս, բիր քու գլոխ լվա, նոր էրթամ հաջ։

Կբերա, ճոչե խաթրից չելի, կլվա խարսի գլոխ։ Կբերա խարսի ապրջան կվերցու, կթալա չաքմաջի ծկեն։

Պառավ կեսա.

— Խագ էնիմ, խագ խագերուն.

Աչքերդ ի բաց դեմ ծակերուն.

Մտիկ էրա ըդ բաներուն։

Յանի իմացութեն կիտա, չաքմաջի տղին, թը դու աչքա խարսի ջանդակ, ես կտկլոզցում, գլոխ կլվամ։ Տղեն ծկերու մեջեն, խարսի ջանդակ չրփլախ կէղնի էդտեղ խալ մի ընոր էրկու ծծի օրթալախն ա, խալ մի ընդրա... փոքու վրեն ա։

Պառավ ընդրա գլոխ կլվա, կպրծի, ջորեր կխագու, խարս կխանի տուն։ Ախչիկ կտեսնի օր ուր բլաղուկ չկա։

Կեսա.— Ճոչո, ճո, հ՚ո՞ւր ա իմ ձեռքի բլաղուկ։

Կեսա.— Լաո՛, չգինամ, քոռնամ, ես խաբար չունիմ։

Էն լէ ինք ուրին կեսա. «Խեղճ ա, կէրթա հաջ, թըխ տանի էնի ճամբխին խարջլխ»։

Կեսա.— Խարս, լաո՛, դե իգին տուր ես կէրթամ, չխասա իմ ընկերտանց, կէրթամ տուն։

Գելի չաքմաջեն կտանի ուր տուն, բազրգան բաշին միջեն կխանա, տղեն կէրթա կխասնի ուր բաղրգանին։

Կէրթա, կեսա.— Հմալ ես, ես գացի քու կնկա էութեն իմցա, կիջեր մի ընդրա ծոց քնա, դու կեսիր՝ «Իմ կնկա պես կայիմ չկա»։ Իմա՞լ ա օր ես իդրա նշանաբան լէ բլաղուկ բերի։— Բլաղուկ կխանա ու կիտա ջանց։

Տղեն կեսա.— Օր հմալ կեսիս ասդի ի՞նչ նշան կեր իմ կնկա ջանի վրեն։

Կեսա.— Խալ մի իդրա ծծի օրթալախն էր, մեկ լէ... փոքու վրեն էր։

Կեսա. «Վոլա գացեր ա իմ կնկա մոտ»։ Էդ տղեն ուր ծիանեբով թասլիմ կէղնի բաղրգան բաշուն։ Տղեն բաղրգան բաշուն կէղի փոշեխան (հասարակ ծառա)։

Ութ տարի նա հ'ինք կէրթա ուր կնկա վրեն, նա ուր ծեն կէրթա։

Կնիկ լէ կեսա. «Վոլա, ես պտի էրթամ իմ մարթուն երևամ, քենի օր ես լսեցի թը իմ իրիկ սանդրիչ խաղցած ա, տարած ա իրիկ ուր ծիաներով բաղրգան բաշին առած ա»։

Գելի քառսուն խորոտիկ ախչիկ կժողվա, լավ շոր կխաքու, կբռնա իրեք մուկ, կգնա մեշ կաշե տոպրկին, կառի կէրթա էդ բաղրգան բաշու արտի մեշ չադըր կզարկա։

Արտ էլի մարդու գլխուն կիտա, կանանչ ա։

Բաղրգան բաշին կեսա.— Գացեք, սանք ըդ ո՞վ ա էկի չադըր զարկե մըշ իմ կանաչ արտին։

Կէրթան, կէնին չէնին չելի, կեսա.— Ծեր աղեն թըխ իգա հ'ոձկա ընձի խանա։

Կէրթան բաղրգան բաշուն կըսին։ Բաղրգան բաշին կէրթա էնտեխ, աչք կքիսի էն ախչիկներ ու էն տղի կնիկ, ուր կուդում կկոտրի, կնստի օղի, էլ չի դա։

Ըդ տղի կնիկ կեսա.— Բաղրգան բաշի, արի սանդրիչ խաղանք,— կեսա,— որ օր իրեք հաղ տանա, ընդրա բաղրգան, ընդրա դոլվաթ ուր մշկներով խասի ընդոր։

Ախչիկն ա, կնստի կխաղա։ Ուր բերած մուկ, ուր օտաց տկով կճղդկցու ու կթորկա, օր մեկ մուկ փախ, տղի խելք կթռի, կշըշկըռի, հաղ մի ախչիկ զբաղրգան բաշին կտանի։

Բաղրգան բաշին կեսա,— Ախչիկ, արի հաղմ լէ խաղանք։— Օր կխաղան մեկ լէ, մուկ օտաց տըկով կճղդկցու, կթորկա, կփախի, էլման բաղրգան բաշին կտանի։

Բաղրգան բաշին կեսա.— Ախչիկ, մեկ լէ խաղանք։

Ախչիկ էլման մուկ կճղդկցու, մուկ կփախի, տղեն էլման շիշկոի տ։ կտարվի։ Իրեք հաղ կթըմըմի։

Ախչիկ կեսա։— Քու ծիանք, քու մշկներ, քու մալ ու դոլվաթ ընձի թասլիմ էղա՞վ։

Կեսա.— Խա՛։

Կնիկ կղանչա զիրիկ, կբերա օղի, կաչքա օր ճանգ մի փոշի ամեկ անգրճի մեշ լցուկ, կեսա.

— Աստված քու տուն ավիրա, դու հ'որի՞ էդըմլա էղար։

Կեսա.— Քու սուշն ա, շարթ բռնեցինք, բաղրգան բաշին

էկավ քու էութեն հ'իմցավ, քու չանդակի նշըներ տեսավ, էկավ, ես ու իմ բազրգան թասլիմ էղա ընդրան, զիս լէ էրեց ուր փոշեխան։

Կտանին զուր էրիկ հըմամլամիշ կէնին, ծեռք մի թագավորական աղեկ շոր կխաքուն, գելին կնստին մահաֆեն (մախկուլի տեխա) ու հ'ինք ուր ծիաներով ու էդ բազրգան բաշին ուր ծիաներով ուր մալով ու դովլաթով կքշին կէրթան էն խաբսի տուն։

Կէրթան տուն, կբերա էդ բազրգան բաշուն կէնա ուր փոշեխան ծեխ թափող։

Զէդ չաղուքար պառավ լէ կբերին կիտան հ'առճև թուի դրոքի կթերթին, կէնին թութուն։

Կեսա.— Ինչ էնեց, էդի էնեց ի գլոխ։

Էդ խասավ ուր մուրազին, դու լէ խասնիս քու մուրազին։

Իրեք խնձոր իջավ հ'երկնուց. մեկ ըսողին, մեկ գրողին մեկ լէ անգանչ էրողին։